գիչ բարձրապատիւ Տէր Արսէն վարդապետի միջոցաւ Ս. Էջմիածնի Սեղանի համար մի հատ գեղեցիկ արծաթեայ աշտանակներ ի յիշատակ տիկին Կատարինէ Նասիբեանցի՝ Նասիբեան—Տ. Պետրոսեան ընկերութիւնից։

Թող օրհնէ Աստուած բարեպաշտ նուիրատուներին։

Լուսարարապետ Մայր Տաճարի Ս. Էջմիածնի՝

ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ։

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Դեռ նոր էինք ողբացել հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի կորուստը, որ հեռագիրը յունուարի 8-ին գուժեց մի ուրիշ բարձրաստիճան եկեղեցականի՝ Շամախու թեմակալ Տ. Եսայի Արքեպիսկոպոս Աստուածատրեանի մահը։ Հանգուցեալը բնիկ Տփխիսեցի էր և իւր մանկական ուսումը 1850—53 թ. ստացել է Շամքորեցւոց եկեղեցու դպրոցում, ապա շարունակել և վերջացրել է Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում։ Վանականութեան մէջ մտել է 1863 թ. Մայիսի 20-ին, ուրար է ստացել Մատթէոս կաթուղիկոսի հրամանով 1864 թ., սարկաւագական ձեռնադրութիւն՝ նոյն թուի յուլիսի 2-ին հանգուցեալ Միհրդատ Արքեպիսկոպոս Բարսամեանցի ձեռքով։ 1865 թ. կրսեր լուսարար է նշանակուել, և այդ պաշտօնը կատարել է մինչև 1866 թ. յունուարի մէկը։ Աբեղայական ձեռնադրութիւն ստացել է 1867 թ. Մարտի 22-ին, իսկ հետևեալ տարին Ապրիլի 3-ին վարդապետական աստիճան է ստացել և Ապրիլի 7-ին Էջմիածնի գանձապահ նշանակուել։ Նոյն թուին Գէորգ Դ. կաթուղիկոսի կողմից արժանացել է վարդապետական ականակուռ խաչի։ 1869 թ. Մայիսի 21-ին արձակուելով գանձապահութիւնից, 1870 թ. յունուարի 30-ին տպարանական ժողովի անդամ է նշանակուել, 1872 թ. վանական կառավարութեան անդամ, իսկ 1873 թ. մայիսի 31-ին Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ և գանձապահ. մի տարի պաշտօն վարելուց յետոյ հրաժարուել և երկրորդ անգամ 1878 թ. մայիսի 2-ին կրկին կոչուած է նոյն պաշտօնին։ Սակայն նոյն թուի հոկտ. 18-ին հրաժարուելով՝ Գէորգ Դ. կաթուղիկոսի կողմից Մանչեստրի Հայոց հովիւ է նշանակուել։ 1834 թ. նոյն պաշտօնով տեղափոխուած է Լոնդոն։ Եւրոպայից վերադառնալուց յետոյ 1888 թ. Սեպտ. 15-ին նշանակուեցաւ Ախալցխայի յաջորդ, նոյն ամսի 19-ին ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստանալով։ Ապա 1890 թ. հոկտ. 2-ին հանգուցեալ Մակար կաթուղիկոսը ձեռնադրութեամբ եպիսկոպոսական բարձր աստիճան շնորհեց՝ նշանակելով Պարսկա-Հնդկաստանի թեմի կառավարիչ։ 1894 թ. յուլ. 26-ին ներկայ Սրբազնագոյն Հայրապետը արքեպիսկոպոսութեան պատիւ շնորհեց ի տրիտուր հաւատարիմ գործունէութեան։ Իր խնդրանաց համեմատ 1896 թ. հրաժարուելով առաջնորդական պաշտօնից՝ Սինոդի անդամ նշանակուեցաւ 1898 թ. մայիսի 31-ին։ Շամախու թեմակալ է հաստատուել 1898 թ. դեկտ. 17-ից։ Տարաբաղդաբար-անողոք հիւանդութիւնը չթողեց երկար մնալ այդ պաշտօնի մէջ. դեկտ. վերջերին Թիֆլիս եկաւ բժշկուելու, բայց յունուարի 8-ին արդէն Տէրը իւր մօտ կանչեց։ Յուն. 13-ին մարմինը Ս. Նշան եկեղեցին տեղափոխուեցաւ, իսկ հետևեալ օրը այնտեղից վանքի աւագ եկեղեցին, որի գաւթում և ամփոփուեցաւ պատարագից և օծումից յետոյ։ Յուղարկաւորութեան գլուխ էր կանգնած Ս. Առաջնորդը Տ. Տ. Տիրայր, Կորիւն և ուրիշ վարդապետների հետ։ Տփխիս ուղևորուելուց առաջ Շամախու Կոնսիստորիայի անդամների ներկայութեամբ կարգադրել էր արձանագրութիւն կազմել, որով 1000 ր. թաղման համար պիտի գործադրուէր, 1000 ր. տապանաքարի և 2000 ր. Մայր Աթոռին պիտի մնար։ Բացի այս գումարներից 6000 ր. առաջուց կտակել էր Ներսիսեան դպրոցի չքաւոր աշակերտների համար։ Հանգուցեալը մեր միաբանութեան ծանրաբարոյ և շիտակ բնաւորութեան տէր անձնաւորութիւններից մէկն էր. նորա կորուստն զգալի է մեզ

համար, մանաւանդ, որ շատ քիչ է այժմ փորձառու բարձրաստիճան եկեղեցականներու թիւը։

Լուսաւորեսցէ Տէր զհոգի հանգուցելոյն, Ամէն։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

—Խառն Ժողովը իր վերջին նստին մէջ կարդացեր է Սսոյ Տեղապահ Տ. Կիրակոս եպիսկոպոսի մէկ գիրը, որով կը ծանուցանէ թէ միաբան Հրանտ վարդապետը Հալէպի տեղապահ նշանակած է. Ժողովը որոշեր է մէկ քանի տեղեկութիւններ ստանալ, Տեղապահին այս առթիւ գրած նամակին մէկ քանի կէտերուն նկատմամբ. Սսոյ Տեղապահը նոյնպէս հաղորդած էր Պատրիարքարան, թէ Յակոբ վարդապետը Կիւրինի տեղապահ նշանակած է։ Բայց տեղացիները իրենց նորընտիր տեղապահէն գժգոհութիւն յայտնած ըլլալով, Խառն Ժողովոյ որոշմամբ այս պարագան Տ. Կիրակոս եպիսկոպոսի ուշադրութեան պիտի յանձնուի, ըստ այնմ հարկ եղածը գործադրուելու համար։

—Ազգային Հիւանդանոցի պատսպարելոց հացկերոյթ տրուեցաւ Գէորգ էֆ. Տէմիրճեանի փափաքին համեմատ, որ իր որդւոյն ամուսնութեան առթիւ 1200 ղրուշ նուիրած է նոյն հաստատութեան.

—Վանայ առաջն. տեղապահ Ծ. Վ. տեղեկագրով մը վանքերու ցուցակը ղրկած էր Պատրիարքարան, խնդրելով, որ բացառիկ կերպով վիճակին մէջ Վանօրէից Խորհուրդ մը կազմուի, հսկելու համար վանքերու վրայ, և առանձին վանահայր, միաբանութիւն ու հոգաբարձութիւն ունենայ. Ժողովը յետ խորհրդակցութեան որոշեց գրել տեղապահին թէ քանի որ իւրաքանչիւր վանք ունի իր առանձին հոգաբարձութիւնը, հետեւաբար Վանական Ժողովոյ պէտք չկայ, միայն հոգաբարձութիւն չունեցող վանքերու համար պէտք է այդ մարմինը կազմել և կամ ուրիշ միջոցաւ կարգադրել.

—Նպաստից Յանձնաժողովն ալ գումարուեցաւ երէկ Ս. Պատրիարքին նախագահութեամբ. Յանձնաժողովը յառաջիկայ տօներուն առթիւ իր նիստերը գադարեցնելէ առաջ, պէտք տեսաւ մէյ-մէկ նպաստ ղրկել կարօտեալներու և մանաւորապէս բանտարկեալներու, ինչպէս արդէն սովորութիւն եղած է. Գոհացուցիչ է, որ յանձնաժողովը իր այս նիստին մէջ նկատողութեան առնելով գաւառական նպաստընկալ վարժարաններու վիճակը, անոնց բարեկարգութեան և կանոնաւորութեան համար խորհրդակցեր և որոշեր է այս մասին հրահանգներ հաղորդել նոյն հոգաբարձութիւններուն։ Ձենք գիտեր թէ հաղորդուած հրահանգները ինչ են, բայց կըսպասենք, որ հրատարակուին անոնք աւելի որոշ հասկցուելու համար, թէ որքան կրնան նպաստել բաղձացեալ բարւոքումը առաջ բերելու.

Յանձնաժողովը Շապին Գարահիսարի մէջ մէկ քանի դպրոցներու բացման համար 2 ոսկւոյ նպաստ մը յատկացուցեր և կէս ոսկի ալ Զէրմիկի դպրոցին բացման համար տալ որոշեր է.

—Եգիպտոսի Առաջնորդ Այվազեան եպիսկոպոս Աղեքսանդրիա հասեր և շքեղ ընդունելութիւն մը գտեր է տեղւոյն Հայ հասարակութեան և ազգ. պաշտօնական մարմիններու կողմէ.

—Վենետկի Մխիթարեանները հազար ֆրանք ղրկեր են Պատրիարքարան, ի նպաստ որբոց և կարօտելոց։

—Իզմիրլեան կտակի մնայուն Յանձնաժողովը՝ առջի օրը մեծամասնութեամբ Բերա Ս. Պատրիարքին բնակարանին մէջ իր նիստը կազմեց Ն. Ամենապատուութեան նախագահութեան տակ. Ի մէջ այլոց, Գալաթիոյ Կեդրոնական Մատենադարանի խնդրոյն շուրջը լրագրաց մէջ տեսնուած քննադատութիւնները ու առաջարկները նկատողութեան առնելով՝ որոշեց իր յանձնաժողովոյն մէջէն երկու հոգի ընտրել, որպէս զի անոնք նախապէս նոյն մատենադարանին մէջ գտնուած ձեռագիր ու տպագիր մատեանները ցուցակագրեն. Սոյն ցուցակագրողներէն մէկը՝ Տ. Յովհաննէս աւագ-քահանայ Մկրեանը ընտրուած է, որուն այս տեսակ գործի մը համար ունեցած յարմարութիւնն ու փորձառութիւնը արդէն յայտնի են գրասիրաց։

—Էնկիւրիի նորընտիր տեղապահ Ներկարարեան Պետրոս վարդապետ և Ռոտոսթոյի նորընտիր տեղապահ Յակոբեան Վահան վարդապետ այսօր կը մեկնին իրենց պաշտօնատեղիները։

—Կաթոլիկ-Ասորիներու պատրիարք Տ. Ապտուլ Մսեհ՝ որ մայրաքաղաքս կը գտնուի, փոխադարձ այցելութեան եկաւ Ազգ. Պատրիարքարան։ Ս. Պատրիարքը բացակայ ըլլալով, Ասորի Պատրիարքը ընդունուեցաւ Փոխանորդ Սրբազանին, Նիկոմիդիոյ Առաջնորդին և Պատրիարքարանի Ա. Գործակատար էֆէնտիին կողմէ։

—Բազմարդիւն ուսուցիչ Սարըեան Մկրտիչ էֆ.-ի հիւանդութեան նկատմամբ մեր երեկուան թիւին մէջ հրատարակուած տեղեկութենէն յետոյ Զմիւռնիայէն նամակ մը առինք, որուն մէջ ցաւօք կը կարդանք թէ Սարըեան էֆ.-ի վիճակը դարձեալ ծանրացեր է, ձախ ձեռքին և ոտքին լծած կաթուածին հետեւանօք. Սարըեան էֆ.-ի կինը ու մէկ աղջիկն ալ հիւանդ են այս միջոցին, և ուրիշ չորս զաւակներ ծնողական հոգածութեան և խնամոց կը կարօտին. Ս. Պատրիարքը հեռագրաւ Սարըեան էֆ.-ի բժշկական տեղեկագիրը պահանջած է, Ա-